

ՍՈՑԻԱԼ-ԿՈՄՄՈՒՆԻՍՏԻԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԷԴՈՒԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Արտադրության արդյունավետության բարձրացման և աշխատավորների սոցիալ-կուլտուրական ու բնակարանային պայմանների բարելավման համար կարևոր նշանակություն ունի սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի կազմավորումը և ձեռնարկություններում դրա ռացիոնալ օգտագործումը: Խրախուսման այս ֆոնդը կազմավորվում է միայն ձեռնարկության շահույթի հաշվին:

Սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի մի մասն օգտագործվում է որպես ձեռնարկության կոլեկտիվի հասարակական սպառման ֆոնդ, իսկ մյուս մասը՝ բնակարանային և կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարության և դրանց կապիտալ ու ընթացիկ վերանորոգման համար:

Նյութական խրախուսման համակարգում ձեռնարկության հասարակական սպառման ֆոնդն էապես տարբերվում է սպառման հասարակական ֆոնդերից: Սպառման հասարակական ֆոնդերը սոցիալիզմի ժամանակ անհրաժեշտ արդյունքի դրսևորման ձևերից են և իրենց բնույթով հանրայնացված անհրաժեշտ արդյունք են: Այդ ֆոնդերը նյութական և հոգևոր բարիքների բաշխման լրացուցիչ ձև են, որոնց գլխավոր առանձնահատկությունը բաշխման յուրահատուկ բնույթն է: Սպառման հասարակական ֆոնդերը հիմնականում բաշխվում են անկախ աշխատանքի քանակից ու որակից, անվճար կամ արտոնյալ պայմաններով և համաժողովրդական սեփականություն են: Դրանք հիմնականում ձևավորվում են պետական բյուջեի միջոցներից: 1977 թ. սպառման հասարակական ֆոնդերը մեր երկրում կազմեցին 99,5 մլդ. ռ., 1975 թ. համեմատությամբ աճելով 10,6%-ով¹:

Այլ բան է ձեռնարկության հասարակական սպառման ֆոնդը, որը գոյանում է տվյալ ձեռնարկության կոլեկտիվի ստեղծած շահույթից և օգտագործվում է միայն նրա աշխատողների կարիքների բավարարման նպատակով: Ձեռնարկության հասարակական սպառման ֆոնդին կարելի է վերագրել սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի միայն այն մասը, որն օգտագործվում է ընթացիկ սպառման համար, այսինքն՝ ձեռնարկության աշխատողների համար անվճար ծառայություններ կատարելու նպատակով: Ֆոնդի այդ մասն օգտագործվում է հանգստյան տների և առողջարանների ուղեգրեր ձեռք բերելու, բուժ-առողջարանային և մանկական հիմնարկներում սննդի կազմակերպման և այլ կուլտուր-կենցաղային կարիքների համար:

¹ «Народное хозяйство СССР в 1977 г.», М., 1978, էջ 408:

Մինչև պլանավորման և տնտեսական խթանման նոր համակարգին անցնելը ձեռնարկության հասարակական սպառման ֆոնդի դերն աննշան էր: Այսպես, 1964 թ. հասարակական սպառման ֆոնդերից տրված արտոնություններն արդյունաբերության մեջ մեկ բանվորի հաշվով ամսական կազմում էին 37 ու, այդ թվում ձեռնարկության ֆոնդից՝ 1 ու 30 կ.²:

Տնտեսական ռեֆորմից հետո սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի շահերը բավական մեծացան: Եթե 1965 թ. ՀՍՍՀ արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների կուլտուր-կենցաղային սպասարկումը բարելավելու, անհատական պարզև-վատրման, հանգստյան տների և սանատորիանների ուղեգրերի ձեռք բերման, միանվագ օգնություն ցույց տալու համար օգտագործվել էր 1 մլն. ու, ապա 1977 թ. միայն սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության նպատակների համար ծախսվել է 5,8 մլն. ու.³:

Սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի մեծությունը, ինչպես հայտնի է, կախված է ձեռնարկության կուլեկտիվի գործունեության արդյունքներից, սակայն բաշխման հարաբերությունների կատարելագործումը պահանջում է ճշտել, թե ինչ նպատակների համար պետք է օգտագործել վերը նշված ֆոնդի միջոցները: Ուսումնասիրությունները վկայում են, որ սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի միջոցները հանրապետության շատ ձեռնարկություններում տարվա ընթացքում լրիվ չեն օգտագործվում և փոխանցվում են հաջորդ տարիներին օգտագործման համար: 1977 թ. վերջին հանրապետությունում այդ ֆոնդի մնացորդը կազմել է 58,2%: Այդ ֆոնդի միջոցները հատկապես վատ են օգտագործվում թեթև, սննդի, տեղական, կաթի և մսի, անտառային և փայտամշակման արդյունաբերության միներալ-քարայինների ձեռնարկություններում: Այդ մասին են վկայում № 1 աղյուսակի տվյալները:

Բերված տվյալներից երևում է, որ ուսումնասիրված միներալ-քարայիններում սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի միջոցներն արդյունավետ չեն օգտագործվում և տարեցտարի փոխանցվող մնացորդները մեծ գումարների են հասնում: Այսպես, 1971 թ. դրանք կազմել են 8005 հազ. ու. կամ ամբողջ ֆոնդի 67,6%-ը, 1973 թ.՝ 3937 հազ. ու. կամ 39,1%-ը, 1974 թ.՝ 6985 հազ. ու. կամ 65,1%-ը, 1975 թ.՝ 5776 հազ. ու. կամ 50%-ը, 1976 թ.՝ 3992 հազ. ու. կամ 38,5%-ը և 1977 թ.՝ 3193 հազ. ու. կամ 37,8%-ը⁴: 1973—1975 թթ. ֆոնդի օգտագործման բարձրացումը պետք է բացատրել ՍՍՀՄ Միներալների խորհրդի 1973 թ. օգոստոսի 22-ի № 594 որոշմամբ, որով ձեռնարկությունների սեփական շրջանառու միջոցների համալրման համար թույլատրվեց օգտագործել տնտեսական խթանման ֆոնդերի մինչև 30%-ը: Դրա պատճառով էլ ֆոնդի օգտագործման մասը նշված տարիներին մեծացել է: 1975 թ. օգտագործված ֆոնդի 53,1, 1976 թ.՝ 41, իսկ 1977 թ.՝ 29,8%-ը ուղղվել է սեփական շրջանառու միջոցների լրացմանը:

² Б. М. Сухаревский, Хозрасчетные фонды стимулирования предприятий («Теория и практика хозяйственной реформы» М., 1967, էջ 85).

³ «Народное хозяйство Армянской ССР в 1977 г.», Ереван, 1978, էջ 267.

⁴ Հաշվարկները կատարված են մեր կողմից, աղյուսակում բերված միներալ-քարայինների հաշվետվությունների հիման վրա:

Ա Ղ Յ Ո Ւ Մ Ա Կ N 1

Սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի
օգտագործման վիճակը ՀՍՀՄ արդյունաբերության մի քանի ձյուղերում
1971—1977 թթ. (հազ. ուր.)

Միևստրություններ	Ընդամենը միջոցները	1971 թ. օգտագործ- ված է		Ընդամենը միջոցները	1977 թ. օգտագործ- ված է		Ուղղված է սեփա- կան շինարարու- թյան միջոցների հա- մարձակմանը
		Գու- մար	Տոկոսային		Գու- մար	Տոկոսային	
ՔՆԻՆ արդյունաբերության միևս- տրություն	5142	1710	33,3	2978	19,5	67	424
Սննդի արդյունաբերության միևս- տրություն	4039	1361	33,7	2757	1336	48,5	285
Տեղական արդյունաբերության մի- ևստրություն	1262	291	23,1	1385	1139	82,2	708
Կաթի և մսի արդյունաբերության միևստրություն	907	332	36,6	1110	631	56,8	98
Անտառային և փայտամշակման արդյունաբերության միևստրու- թյուն	487	138	28,3	226	162	71,7	55
Ընդամենը	11837	3832	32,4	8456	5263	62,2	1570

Այդ ֆոնդի օգտագործման վիճակը հասկապես վատ է տեղական, ան-
տառային և փայտամշակման արդյունաբերության միևստրությունների ձեռ-
նարկություններում: Դրանքում համոզվելու համար բավական է նշել, որ ան-
տառային և փայտամշակման արդյունաբերության միևստրության մի շարք
ձեռնարկություններ, օրինակ, 1977 թ. Կոդբի և Թումանյանի փայտամշակ-
ման կոմբինատները, Դիլիջանի, Կամոյի և Ղափանի կահույքի ֆաբրիկաները
սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության
ֆոնդի միջոցները բոլորովին չեն օգտագործել, իսկ Իջևանի փայտամշակման
կոմբինատն օգտագործել է ֆոնդի միայն 8,3, Լենինականի կահույքի ֆաբ-
րիկան՝ 9%-ը և այլն:

Եթե տնտեսական ռեֆորմի առաջին տարիներին այդ երևույթը հիմնա-
կանում բացատրվում էր փորձի պակասությամբ, ապա ներկայումս դա ան-
թույլատրելի է: Հաճախ ձեռնարկությունների ղեկավարները համոզված լինե-
լով, որ ֆոնդի միջոցները կուլեկտիվի սեփականությունն են և անկախ օգտա-
գործվելուց պետք է մնան իրենց տրամադրության տակ, սկսում են կուտակել
և սառեցնել դրանք: Անշուշտ այդ հանգամանքի հետևանքով էլ առաջանում են
վերը նշված թերությունները: Մեր կարծիքով, ներկայումս գործող կարգում
ֆոնդի օգտագործման այս մասի համար պետք է սահմանել որոշ ժամանակ
(նպատակահամար է երկու տարի), որից հետո շօտագործված միջոցները
փոխանցել միևստրության կամ արտադրական միավորման ղեկավարին
ֆոնդ: Դա կուսակցության ձեռնարկությունների շահագործվածությունը ֆոնդերի
օգտագործման հարցում և, միաժամանակ, ձեռնարկության ղեկավարներին
ու հասարակական կազմակերպությունների աշխատողներին կստիպի մեծ

ուշադրություն դարձնել այդ ֆոնդերի միջոցները ժամանակին և նպատակա-
յին օգտագործելու վրա: Իսկ դա իր հերթին կնպաստի տվյալ կոնկրետի աշ-
խատողների կուլտուր-կենցաղային պայմանների և բարեկեցության բարձ-
րացմանը:

Սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարու-
թյան ֆոնդի օգտագործման ժամանակ ձեռնարկությունների առջև դրվում է
երկու խնդիր: Դրանցից առաջինը հեռանկարային բնույթ ունեցող խնդիր է,
որի լուծման համար պահանջվում է երկարատև ժամանակաշրջան (կառուց-
վում են բնակարաններ, կուլտուր-կենցաղային նշանակության օբյեկտներ և
այլն): Երկրորդ ֆոնդի միջոցների մի մասն օգտագործվում է ընթացիկ պա-
հանջումների բավարարման՝ անվճար ուղեգրերի, սննդի էժանացման և այլ
նպատակների համար:

Այժմ տեսնենք, թե ինչպես է բաշխվում սոցիալ-կուլտուրական միջոցա-
ռումների և բնակարանային շինարարության ֆոնդը հանրապետությունում:

Սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարու-
թյան ֆոնդի օգտագործման կարևոր ուղղություններից է բնակարանային շի-
նարարությունը: Բնակարանային շինարարության մի մասը պետք է իրա-
կանացի սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինա-
րարության ֆոնդի հաշվին: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ մեր ու-
սումնասիրած արտադրական միավորումներն այդ նպատակով օգտագործում
են աննշան գումարներ: Այսպես, եթե «Հայէլեկտրալույս» արտադրական միա-
վորման առանձին մասնաճյուղեր (Երևանի փորձնալուսատեխնիկական գոր-
ծարան, Մարալիկի մագնիսային ուժեղացուցիչների գործարան, Ղափանի,
Սիսիանի, Մարտունու և Գագարինի էլեկտրալամպերի գործարաններ) 9-րդ
հնգամյակում և 1977 թ. բնակարանային շինարարության համար սոցիալ-
կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդից
միջոցներ չեն օգտագործել, ապա «Հայէլեկտրաշարժիչ» արտադրական միա-
վորումն այդ նպատակով ընդհանրապես ծախսեր չի կատարել: Այս երևույթը
կարելի է բացատրել այն բանով, որ այդ միջոցների օգտագործման դեպքում
ձեռնարկությունները հանդիպում են լուրջ դժվարությունների: Այսպես, հա-
ճախ փոքր ձեռնարկություններում սոցիալ-կուլտուրական միջոցառումների
և բնակարանային շինարարության ֆոնդից բնակելի շենք կառուցելու նպա-
տակով առանձնացված միջոցները չեն բավարարում: Նույնիսկ փայտափրա-
կան մասնակցությամբ բնակարանային շինարարության հարցերը չեն լուծ-
վում, քանի որ դրանք կապված են տնտեսական և կադմակերպչական որո-
շումների լուծման հետ: Ավելին, երբեմն տվյալ շրջանում անհրաժեշտ քա-
նակությամբ ձեռնարկությունների բացակայության հետևանքով այդ խնդրի
լուծումն անհնարին է դառնում: Անգամ լինում են դեպքեր, երբ ձեռնարկու-
թյունները, ունենալով դրամական միջոցներ, չեն կարող դրանք իրացնել: Օրի-
նակ, ձեռնարկությունները միշտ չէ, որ կարող են գտնել շինարարական կադ-
մակերպություններ, որոնք համաձայնվեն կատարել անհրաժեշտ աշխատանք-
ներ, քանի որ դրանք չեն մտցվում շինարարական կադմակերպությունների
պլանի մեջ: Բացի այդ, ձեռնարկությունները դժվարությունների առջև են
կանգնում շինարարական նյութերով ապահովված չլինելու հետևանքով: Նկա-
տի ունենալով այդ դժվարությունները, ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը
1976 թ. օգոստոսի 10-ի հատուկ որոշմամբ ձեռնարկություններին թույլատրեց

իրենց արտադրական պլանների մշակմանը զուգահեռ ներկայացնել նաև շինմոնտաժային աշխատանքների համար անհրաժեշտ նյութերի հայտ: Ձնա-
լած դրան ձեռնարկությունների մեծ մասը չի ապահովվում անհրաժեշտ նյու-
թերով: Հենց այդ պատճառով էլ, օրինակ, Արզնու տեխնիկական ճշգրիտ քա-
րերի գործարանը տարիներ շարունակ բնակարանային շինարարություն չի
կարող կադմակերպել:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ շատ ձեռնարկություններում
սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության
ֆոնդի գումարները բնակելի տների և կուլտուր-կենցաղային նշանակության
շենքերի կառուցման համար չեն բավականացնում, ՍՍՀԿ Կենտկոմը և ՍՍՀՄ
Մինիստրների խորհուրդը 1965 թ. հոկտեմբերի 4-ի որոշմամբ ձեռնարկու-
թյուններին թույլատրեցին փայտտիրական մասնակցության իրավունքով կա-
ռուցել բնակելի տներ և կուլտուր-կենցաղային նշանակության օբյեկտներ:
Ժիշտ է, դա որոշ չափով բարելավեց վիճակը, բայց հարցը վերջնականապես
չլուծվեց, քանի որ դեռևս պարզ չէ, թե փայտտիրական իրավունքով բնակա-
րան կառուցող ձեռնարկություններից ո՞րը պետք է շինանյութերով ապահովի
շինարարական կադմակերպություններին: Հաշվի առնելով այդ դժվարություն-
ները, ներկայումս ձեռնարկություններն իրենց տրամադրության տակ եղած
գումարները փոխանցում են տեղական սովետներին և այդ միջոցներին հա-
մապատասխան ստանում պատրաստի բնակարաններ: Ձնալած նման փորձը
կարող է ունենալ որոշ առավելություններ (օրինակ, գա ձեռնարկություններին
ազատում է նյութերի պլանավորումից, շինարարական կադմակերպություն-
ներ փնտրելուց և այլն), այնուամենայնիվ, այն ունի իր թերությունները: Բանն
այն է, որ տեղական սովետները շատ հաճախ բնակարանները տրամադրում
են ձեռնարկություններից հեռու, հանգամանք, որն առանձին դժվարություն-
ներ է ստեղծում աշխատողների համար: Դա բավականին ծանրաբեռնում է
քաղաքային տրանսպորտը, ինչպես նաև կադրերի հոսունության պատճառ
դառնում: Հաշվի առնելով վերը նշվածը, ավելի ճիշտ կլինի, եթե բնակարա-
նային ֆոնդը բաշխելու ժամանակ հաշվի առնվի նաև բնակարանների մոտի-
կությունն աշխատանքի վայրին:

Ներկայումս հանրապետության որոշ քաղաքներում, շրջաններում և բան-
վորական ավաններում ձեռնարկությունների քանակը քիչ է: Այդ պատճառով
էլ սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարու-
թյան ֆոնդի միջոցները բնակարաններ կառուցելու համար անբավարար են:
Հաշվի առնելով այդ հանգամանքը, նպատակահարմար է արդյունաբերական
ձեռնարկությունների առաջավոր աշխատողներին ֆոնդի միջոցների հաշվին
վարկ տրամադրել՝ անհատական բնակարաններ կառուցելու համար:

Սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարու-
թյան ֆոնդի լավ օգտագործմանը կարող է նպաստել նաև այն, որ ձեռնարկու-
թյուններն իրենց աշխատողներին այդ ֆոնդից միջոցներ տրամադրեն կոոպե-
րատիվի անդամ դառնալու համար:

Սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարու-
թյան ֆոնդի օգտագործման կարևոր ուղղություններից են նաև բուժ-առողջա-
պահական, սպորտային միջոցառումների, աշխատողների կուլտուր-լուսավո-
րական և կենցաղային սպասարկման բարելավման հետ կապված ծախսերը:
Փաստերը ցույց են տալիս, որ ուսումնասիրված արտադրական միավորում-

ներում և ձեռնարկություններում այդ ուղղությամբ առանձնացված միջոցները նպատակին չեն ծառայում: Զեռնարկություններն այդ միջոցները հատկացնում են ցուցանիշների կազմակերպման, դիտողական ազդեցության, արտադրամասերում դասախոսություններ կարդալու և այլ նպատակների համար: Օրինակ, «Հայլենկտրալույս» արտադրական միավորումը վերոհիշյալ նպատակների համար 1977 թ. օգտագործել է այդ ֆոնդի միջոցների 17,3, «Հայլենկտրաշարժիչ» արտադրական միավորումը՝ 25,4, իսկ «Հայլենկտրամեքենա» արտադրական միավորումը՝ 28,9⁵-ը: Վերլուծությունից պարզվում է, որ ողող միավորումներ և նրանց մեջ մտնող մասնաճյուղեր բավական մեծ գումարներ են հատկացնում կուտուր-կենցաղային հիմնարկների և պիտե-րական ճամբարների պահպանմանը: Այսպես, Կիրովականի լուսատեխնիկական գործարանը նշված նպատակների համար 1977 թ. ծախսել է այդ ֆոնդի 62,1%-ը: Եթե վերը նշված գործարանը այդ գումարի 60%-ը օգտագործեր բնակարանային շինարարության համար, ապա նա կարող էր կառուցել 850 քառակուսի մետր բնակելի տարածություն և բնակարանով ապահովել շուրջ 32 ընտանիք: Նպատակահամար կլինի, որ վերը նշված նպատակների համար օգտագործվի սոցիալ-կուտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի մինչև 5%-ը: Այդպիսի ծախսերը գործարանը պետք է կատարի իր արտադրական ծախսերի հաշվին և մտցնի արտադրանքի ինքնարժեքի մեջ:

«Հայլենկտրալույս» արտադրական միավորման օրինակից երևում է, որ չափազանց քիչ ուշադրություն է դարձվում բուժառողջապահական հիմնարկների պահպանմանը և դեղորայքի ձեռքբերմանը, հանգստյան տների և առողջարանների ուղեգրեր ստանալուն, սպորտային միջոցառումներին և այլն: Այդ են վկայում № 2 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ № 3

Սոցիալ-կուտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի օգտագործումը առանձին ուղղություններով «Հայլենկտրալույս» արտադրական միավորումում (ուրվիներով և կոպեկներով, մեկ աշխատողի համար)⁵

Ֆոնդի օգտագործման ուղղությունները	1975 թ.			1976 թ.			1977 թ.		
	Ընդամենը	Տարվա համար	Ամսական	Ընդամենը	Տարվա համար	Ամսական	Ընդամենը	Տարվա համար	Ամսական
Բուժառողջապահական հիմնարկների պահպանման և դեղորայքի ձեռքբերման համար	44000	4,52	0,38	52000	4,24	0,35	2000	0,16	0,01
Հանգստյան տների և սանատորիաների ուղեգրերի ձեռքբերման համար .	42000	4,32	0,36	40000	3,26	0,27	—	—	—
Սպորտային միջոցառումների համար	4000	0,41	0,03	20000	0,16	0,01	—	—	—

⁵ Հաշվարկները կատարված են մեր կողմից, «Հայլենկտրալույս» արտադրական միավորման տարեկան հաշվետվությունների հիման վրա:

Աղյուսակից երևում է. որ այդպիսի աննշան գումարները չեն կարող արտադրական նույնականացման և նրանց առանձին աշխատողների համար խթան ծառայել ձեռնարկության վերջնական արդյունքների բարձրացման գործում:

. Հաճախ լինում են դեպքեր, երբ ֆոնդի միջոցները ձեռնարկությունները հատկացնում են համաքաղաքային պահանջարկների բավարարմանը: Դա հետեանք է այն բանի, որ որոշ տեղական սովետներ ձեռնարկություններին պարտավորեցնում են մասնակցելու քաղաքի բարեկարգման աշխատանքներին (ասֆալտապատում, ճանապարհների նորոգում, քաղաքականների բարեկարգում, այգիների, պուրակների, փողոցների լուսավորություն և այլն): Անկասկած ձեռնարկությունները պետք է որոշակի մասնակցություն ունենան քաղաքների և բնակավայրերի ավանների բարեկարգման աշխատանքներին, սակայն չի նախատեսված, որ այդ ֆոնդից մասհանումներ կատարվեն այնպիսի համաքաղաքային նպատակների համար, ինչպիսիք են կենցաղ-սպասարկման հոմաքիստների կառուցելը, քաղաքային այգիների բարեկարգումը և այլն: Եթե սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի մի մասը հաակացվում է համաքաղաքային կարիքների օգտագործմանը, ապա անհրաժեշտ է դա օրինականացնել և ճիշտ նորմատիվներ սահմանել այդ միջոցառումների իրականացման համար:

Այսպիսով, սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդի օգտագործման ասպարեղում տեղ գտած թերությունների վերացումը էապես կնպաստի այդ ֆոնդի ավելի արդյունավետ օգտագործմանը և աշխատողների կենսամակարդակի հետագա բարձրացմանը:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЭФФЕКТИВНОГО ИСПОЛЬЗОВАНИЯ ФОНДА СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ МЕРОПРИЯТИЙ И ЖИЛИЩНОГО СТРОИТЕЛЬСТВА

ЭДУАРД АРУТЮНЯН

Резюме

Значительная часть средств фонда социально-культурных мероприятий и жилищного строительства, которая направляется на осуществление культурно-просветительных мероприятий, медицинского и бытового обслуживания, оздоровительных и спортивных мероприятий, в объединениях и предприятиях остается неиспользованной, поэтому целесообразно для этой части фонда установить определенный срок (два года), после чего неиспользованные средства в обязательном порядке передавать в резервный фонд министерства или производственного объединения. В рабочих поселках и селах, где имеются заводы, необходимо из фонда социально-культурных мероприятий и жилищного строительства предоставить средства передовикам производства для строительства индивидуальных жилых домов.